

ՀԻՇԵՑՈՒՄ ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Գրքույկը մշակվել է «Զինվորի մայր»
հասարակական կազմակերպության կողմից՝ ԵԱՀԿ
Երևանյան գրասենյակի աջակցությամբ*

«ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ և ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

*2008 թվականի
նախագահական ընտրությունների
ընդառաջ*

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ
Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովին
համագործակցության և մասնագիտական
աջակցության համար:

ԵՐԵՎԱՆ, 2007



Գրքույկը հրատարակված է 2008 թ. նախագահական
ընտրությունների շեմին ընտրական օրենսդրության հիմնական
դրույթների և համապատասխան իրավունքների մասին
զինձառայողներին իրազեկելու նպատակով

Գրքույկի վաճառքն արգելվում է:

Մեր շահառուներին.

Այսօր Հայաստանը կանգնած է նախագահական ընտրությունների նախաշեմին: Հաշվի առնելով այս գործընթացի կարևորությունը երկրի առաջիկա ժողովրդավարական զարգացման համար, կազմակերպությունը ձեռնամուխ է եղել սույն տեղեկատվական գրքույկի հրատարակմանը, որի նպատակն է հրազելել զինծառայողներին ընտրական օրենսդրության հիմնական դրույթների և համապատասխան իրավունքների մասին:

Կարծում ենք, որ ընտրությունների ժամանակ ընտրողների գրագետ պահվածքը կարևոր է երկրում քաղաքացիական հասարակության կայացման համար, քանի որ ընտրություններն անմիջական ժողովրդավարության, պետության կառավարմանը մասնակցելու հիմնական եղանակն են: Այս կապակցությամբ կարևոր է ընտրություններին մասնակցել ընտրական օրենսդրության բավարար իմացությամբ: Սա առավելապես վերաբերում է այն քաղաքացիներին, որոնք ծառայում են ազգային բանակում և ժամանակավորապես դուրս են մնում քաղաքացիական կյանքում տեղի ունեցող գործընթացներից:

Հուսով ենք, որ գրքույկը կնպաստի ընտրություններին և ընտրական իրավունքին վերաբերող նորմերի իմացությանը, ինչպես նաև կբարձրացնի պատասխանատվությունը ընտրական գործընթացի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 2)

Այդ իշխանությունն իրականացնելու համար զոյություն ունեն մի շարք պետական ինստիտուտներ, այդ թվում՝ նաև՝ նախագահական ինստիտուտը:

Հանրապետության Նախագահն ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության Նախագահը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը:

(ՀՀ Սահմանադրություն, հոդված 49)

Հանրապետության Նախագահի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Ձինժառայողների ընտրական իրավունքը

Ձինժառայողներն ունեն քաղաքական և քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ, որոնցից մեկն էլ ընտրելու իրավունքն է:

Ընտրություններին մասնակցելը յուրաքանչյուր զինժառայողի քաղաքացիական պարտքն է, այլ ոչ թե զինվորական պարտականությունը:

Ձինժառայողները մասնակցում են միայն Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին:

Ձինժառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինժառայողներ համարվող քաղաքացիները չեն կարող մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին:
(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 2)

Ձինժառայողների ընտրողների ցուցակում ընդգրկվելը

Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ ժամկետային զինժառայողները, զորամասերի տեղակայման տարածքում բնակվող զինժառայողները և նրանց ընտանիքների՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, վարժական հավաքներ անցնող քաղաքացիները ընդգրկվում են համապատասխան զորամասի ընտրողների ցուցակում:

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ժամկետային զինժառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինժառայողները (քաղաքացիները), Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ, օրենքով

սահմանված կարգով արձակուրդում լինելու դեպքում կարող են ընդգրկվել իրենց մշտական բնակության վայրերում ընտրողների ցուցակում, եթե

- քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ իրենց համայնքի ղեկավարին,
- քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 15 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնեն ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ

հայտ:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 10)

Ձինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները քվեարկությունից 10 օր առաջ փակցվում են զորամասերում՝ զինժառայողների համար տեսանելի տեղում:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 13)

Քվեարկության օրը

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն, քվեարկության օրը

Ձ Ի Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ղ Ն Ե Ր Ը՝

- 1 մուտք են գործում տեղամասային կենտրոն ոչ շարային կարգով և առանց զենքի.
(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 54)
- 2 մոտենում են հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ.

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ձինվորական սպաները և ենթասպաները կարող են ներկայացնել անձնագիր կամ զինվորական վկայական, իսկ այլ զինժառայողները՝ զինվորական գրքույկ:
Ընտրողի անձնագրի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 55)

3 հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ցուցակում լրացնելուց հետո ստորագրում են այդ տվյալների դիմաց.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե այս կամ այն պատճառով չեք կարող ինքնուրույն ստորագրել, դիմեք ուրիշի օգնությանը՝ բացառությամբ հանձնաժողովի անդամների և վստահված անձանց:
(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 55)

4 հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամը ստորագրում է համապատասխան սյունակում և դրոշմակնքում զինվորական վկայականի կամ զինվորական գրքույկի վերջին էջը.

5 գրանցվելուց անմիջապես հետո մոտենում են հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին և ստանում քվեարկության մեկ քվեաթերթիկ և մեկ քվեարկության ծրար.

6 անցնում են քվեախցիկ՝ քվեարկելու.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում:
(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 56)

Քվեաթերթիկում կատարեք միայն V ձևի նշում այն թեկնածուի անվան դիմաց, որին կողմ եք քվեարկում: Այլ նշում անելու դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր: Մեկ թեկնածու քվեարկելու դեպքում եթե կողմ եք քվեարկելու, նշում եք կատարում «կողմ են» բառերի, իսկ եթե դեմ՝ «դեմ են» բառերի դիմաց:

7 քվեարկության խցիկում քվեաթերթիկը ծալում, տեղավորում են քվեարկության ծրարի մեջ և մոտենում քվեատուփին.

8 քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության ծրարը կնքելուց հետո քվեարկության ծրարը օգում են քվեատուփի մեջ.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը իր նախաձեռնությամբ կամ վստահված անձի պահանջով կարող է համոզվել ընտրողի՝ տվյալ տեղամասում հաշվառված լինելու մեջ:
(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 57)

9 քվեատուփի մեջ քվեարկության ծրարը գցելուց հետո դուրս են գալիս տեղամասային կենտրոնից:

Կարևոր է հիշել՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ, կամավոր հիմունքներով:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 1)

Ընտրություններում քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է և հետապնդվում է օրենքով:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 6)

Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկել:

(ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 57)

Ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի ինքն է որոշում՝ ում օգտին քվեարկել: Ոչ ոք, ոչ մի պատրվակով իրավունք չունի ընտրողին պարտավորեցնել կամ հարկադրել իր ընտրական իրավունքն իրականացնել կամ բաց քվեարկել:

Հավելված 1

Հավելված 1

Գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության կողմից
13 փետրվարի 2007թ. Պետական գրանցման թիվ 60607050

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2007թ. փետրվարի 1-ի թիվ 17 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1 փետրվարի 2007թ.
ք. Երևան

N 17-Ն

Ն Շ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԶԻՆՇՍԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿԸ ԴՐՈՇՄԱՎԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ
ԴՐՈՇՄԱՎԿՆԻՔԻ ՆՍՈՒՇԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի
41-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով և 55-րդ հոդվածի 2-րդ կետով,
Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական
հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Սահմանել՝

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովում զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը կնքելու դրոշմակնիքի նմուշը համաձայն թիվ 1 հավելվածի:
Դրոշմակնիքը կլոր է, 8 մմ տրամագծով, կնիքի եզրագծով նշված են «Կ Ը Հ» տառերը և ընտրության անցկացման տարեթիվը:
Յուրաքանչյուր համապետական ընտրության համար պատրաստվում է նոր դրոշմակնիք՝ ընտրության անցկացման տարեթիվով:
2. Համապետական ընտրությունների ժամանակ հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամը դրոշմակնքում է զինվորական վկայականի կամ զինվորական գրքույկի վերջին էջը:
3. Դրոշմակնիքները վերադարձվում են կենտրոնական ընտրական հանձնաժողով և ենթակա են ոչնչացման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության հասցեն.

Երևան, Խանջյան 5, սենյակ 107

հեռ. /374 10/ 529931

E-mail : armgreta@arminco.com

www.zinvori-mair-ngo.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. Ազարյան